

ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վարակի աղբյուրը՝

HBV-ով վարակված մարդիկ՝ հիվանդության բոլոր փուլերում:

Փոխանցման ուղիները

Բնական Ճանապարհ՝ վնասված մաշկի և լորձաթաղանթների միջոցով, որը ներառում է՝

- Մեռական ճանապարհ

• Կենցաղ-կոնտակտային ճանապարհ (Այս ճանապարհով վարակումը հիմնականում դիտվում է ընտանիքներում, կազմակերպված կոլեկտիվներում՝ կենցաղում վիրուսով կոնտամինացված կենցաղային իրերի՝ ատամի խոզանակ, ատկի և այլն միջոցո:))

• Մորից երեխային փոխանցման ճանապարհ՝ հղիության և ծննդաբերության ժամանակ:

Արհեստական ճանապարհ

- Բժշկական կազմակերպությունում բուժական և ախտորոշիչ արյունային, ինվազիվ միջամտությունները, կոնտամինացված բժշկական նշանակության իրերի օգտագործումը:
- Բժշկական կազմակերպությունում վարակված արյան փոխներարկումը
- Թմրամիջոցների օգտագործում (ներարկային, ներքթային)
- Վարսահարդարման և կոսմետիկ միջամտությունները՝ դաջվածքներ, մատնահարդարում, ոտնահարդարում, պիրսինգ, սպարատային կոսմետոլոգիա

Մաշկի միջոցով HBV-ի փոխանցման ռիսկը կախված է վարակի աղբյուրի մոտ HBeAg- կարգավիճակից՝

- Եթե HBeAg -դրական է, ռիսկը կազմում է մինչև 30%,
- Եթե HBeAg-բացասական է՝ 1-6%:

HBV վարակի հարուցիչ հիմնական փոխանցման գործոններն են՝

- արյունը,
- կենսաբանական հեղուկները՝ սերմնահեղուկը, հեշտոցային հեղուկը:

Եթե կանխարգելում չի իրականացվում, վիրեմիայով մայրերի զգալի մասը, հատկապես HBeAg-շնադրական, վարակը փոխանցում են իրենց երեխաներին ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո: Պերինատալ

վարակումից հետո (մինչև 6 ամսականը) քրոնիկ վարակի զարգացման ռիսկը կազմում է 90%, սակայն 6 ամսականի և 5 տարեկանի միջև նվազում է մինչև 20-60%:

Ռիսկի խմբեր

- Առողջապահության և արտակարգ իրավիճակների ծառայություններ մատուցողները
- Միասեռականներ
- Թմրամիջոցներ օգտագործողներ
- Բազմաթիվ սեռական գուգրնկերներ ունեցողներ
- Արյան և բաղադրիչների ռեցիպիենտներ(հատկապես մինչև 1992թ)
- Դաջվածքներ և պիրսինգ ունեցող անձինք
- Լյարդի քրոնիկ հիվանդություններով անձինք
- Երիկամի հիվանդություններով անձինք
- Շաքարային դիաբետով 60տ-ից բարձր անձինք
- Հեպատիտի բարձր տարածվածությամբ երկրներ ճամփորդողներ, ապրողներ
- Հեպատիտով վարակված մորից ծնված երեխաներ
- ՄԻԱՎ -դրական անձինք
- Բժշկական կամ ատամնաբուժական ծառայությունների ստացողներն այն վայրերում, որտեղ վարակման խիստ վերահսկում չի իրականացվում, ցավոք, դեռ խնդիր է աշխարհում
- Քրեակատարողական հիմնարկի կալանավորներ